№ 30 Փետրվարի 26 (Մարտի 9) 1880 Փետրվարի 26 (Մարտի 9) № 30

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ցորաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բայց կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի խորհուրդ։ — Ներքին տեսութիւն, Նամակ Նոր-Նախիջևանի։ Նամակ խմբագրին, Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն, Եւրոպայի դրութիւնը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ խնդիր։

## ՄԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Մեր խմբագրութեան միջոցով ուղարկվեցաւ երկու շաբաթվայ ընթացքում 3200 ռուբլի յօգուտ Վանի սովատանջների, «Փորձի» խմբագրութեան միջոցով 2000 ռուբլուց աւելի, եթէ հաշւենք որ ուրիշ ձեռքերով էլ մօտ մի 1000 ռուբլի ուղարկվեցաւ, ամբողջ գումարը կանի մօտ 6000 ռուբլի, որ ուղարկվեցաւ սովատանջների համար հիմնված Կ. Պոլսի և Վանի մասնաժողովներին։

Ի հարկէ այդ գումարը շատ մեծ գումար չէ, բայց այնու ամենայնիւ դա լաւ է քան ոչինչ։ Ուղարկված փողերը կարող են բոպէական օգնութիւն հասցնել Հայաստանի սովամահ ժողովրդին։ Լսում ենք որ Թիֆլիսի տիկիններն էլ սկսեցին փողեր հաւաքել նոյն նպատակով։

Յոյս կայ ուրեմն որ բացի արդէն ուղարկված փողերից, դարձեալ գումարներ կը հաւաքվեն յօգուտ Հայաստանի սովատանջների։

Բայց մենք կուզենայինք մի բանի վրա Կ. Պոլսի և Վանի մասնաժողովների ուշադրութիւնը դարձնել և մի կարևոր խորհուրդ տալ այդ մարդասիրական ընկերութիւններին։

Թող Ռուսաստանից ստացած դրամները և այն դրամները, որոնք նոյն նպատակով Կ. Պոլսում և Թիւրքիայի ուրիշ տեղերում հաւաքվեցան, և որոնց քանակութիւնը մեզ յայտնի չէ, գործ դրվեն Հայ սովատանջ ժողովրդի անմիջական պէտքերին լրում տալու համար, թող այդ փողերով շուտով հաց և ալիւր առնվի և բաժանվի Հայաստանի խեղճ ժողովրդի մէջ, բայց չը պէտք է մոռանալ որ դորանով գործը չէ կարող վերջացած համարվել. դարունը մօտ է և ժողովուրդը, որի անմիջական, բոպէական, քաղցի պէտքերին գուցէ մասամբ լրում տրվեցաւ, գարնան գալուն պէս պէտք է պատրաստ սերմ ունենայ որ նորից ցանի իր արտերը։ Եթէ ոչ, սովը կարող է դարձեալ կրկնվել և սաստկանալ աշնանը։

Ահա ինչ խորհուրդ մենք կը համարձակվէինք տալ սովատանջների դրութեան վրա խնամող մասնաժողովներին. մինչև այժմ ստացված փողերը շուտով գործ դնել ալիւր գնելու և ժողովրդին այդ անհրաժեշտ պիտոյքը բաժանելու վրա, իսկ այնուհետև հաւաքվելու փողերի մի յայտնի մասը, ինչքան իրանք հարկաւոր կը համարեն, գործ դնեն ցորենը առնելու վրա, որպէս զի կարողանան Հայաստանի ժողովրդին սերմ բաժանել և այդպիսով միջոց տան Հայաստանի երկրագործ ժողովրդին գարնան գալուն պէս սերմանել ցորենը իրանց հայրենիքի արտերի վրա։

Իսկ դրա համար հարկաւոր է, ի հարկէ, որ թէ Ռուսաստանի, թէ Թիւրքիայի և թէ Պարսկաստանի հայ ժողովրդի ունևոր դասը և ամբողջ ազգի քիչ շատ միջոց ունեցող մարդիկ, որքան հնար է, չը խնայէին իրանց առատ նուէրները յօգուտ իրանց սովատանջ եղբայրակիցների։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

7 փետրվարի

Նորերումս մեզանում պատահեցաւ մի անցք, մի հատ իրողութիւն, որ ամենի ուշադրութեան առարկայ էր, որ երկար ժամանակի խօսակցութիւնների նիւթ և զրոյցների առիթ էր եղած։

Երբ մի վաճառական յաջող ընթացք է տալիս մի սարսափելի վախճանի։ Բերդը չորեք կողմից սեղմված էր, կարծես, մի երկաթի օղակի մէջ, որը հետզհետէ նեղնալով, կամենում էր միանգամից խեղդել և մահացնել յուսաբեկ պաշարվածներին։ Յարաբերութիւնը դրսի հետ բոլորովին կտրված էր։

Պաշարումը պատահեց 1877 թի յունիսի 6-ին և տեւեց ամբողջ 23 օր։ Դա այն ժամանակն էր, երբ ռուսաց յաջողակ սրի բախտը Հայաստանում յանկարծ փոխվեցաւ։ Ցեղային մահմեդականութիւնը, որ սկզբում այնքան յաջողութեամբ ընդունեց ռուսաց տիրապետութիւնը, կրկին ապստամբվեցաւ և միացաւ Սմայիլ փաշայի զորքերի հետ։ Գեներալ Տէր-Լուկասովը, երևանեան զորաբաժնի հրամանատարը, այդ միջոցում գտնվում էր Զէյդեգանի և Դալի—Բաբայի մէջ, և իր փոքրաթիւ զունդերով քաջութեամբ պատերազմում էր Մուխթար փաշայի հինգ անգամ աւելի ուժի դէմ։ Նա, երևի, տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր պատահել դժբախտ Բայազէդի հետ, որին թողել էր բերդապահ (կոմենդանտ) Ըչտոկվիչի պահպանութեան ներքոյ։

Գիշեր էր։

Կիսալուսնի եղջիւրը դեռ նոր չքացել էր հորիզոնից, թողնելով իր ետևից մթին խաւար։ Կարծես, այդ խաւարը, այդ մութը աւելի ախորժ լինէր պաշարվածների համար։ Կարծես, լուսինը, տիեզերքի սիրելին, իր արծաթափայլ ճառագայթներով մատնում լինէր նրանց։ Բայց գիշերի մթութիւնը դարձեալ չը կարողացաւ արգելք լինել բարբարոսների կատաղի յարձակմանը։ Բայազէդի միջնաբերդը, որպէս մի մեալ կէտ, անորոշ կերպով նկարված էր բլուրների բարձրաւանդակի վրա։ Նէ ամեն կողմից կրակը մաղվում էր այդ կէտի վրա, և ամեն կողմից թնդանօթների ռումբները ու հրաձէգների գնդակները կարկտի նման թափվում էին այնտեղ։ Բերդը մռնչում էր, որպէս մի վիթխարի գազան, որին ամեն կողմից հարուածում էին։ Նա դեռ ևս յամառութեամբ մաքառում էր օրհասի և մահուան դէմ։ Նա վրեժ էր մեռնել, բայց փառքով մեռնել։ Մօտ 1000 ռուս զինուորներ, նոյն չափով հայ և թուրք կամաւորների հետ, կռվում էին Սմայիլ փաշայի քսան հազարի դէմ։ Բերդից խիստ սակաւ էին պատասխանում, որովհետև հրաձէգների պաշարը խնայում էին, որը սպառվելու մօտ էր։ Միայն երբեմն արձակում էին մի կամ երկու թնդանօթ, որոնց բերանը դարձնում էին դէպի այն կողմը, ուսկից յայտնվում էր թշնամու կրակը։

Նոյն գիշերը, բերդի խարխուլ շինվածքներից մէկի մէջ, որ մի ժամանակ ծառայում էր որպէս զինուորանոց, և ռումբերի տիրելուց յետոյ, օսմանցիները թողել էին կիսաւեր և հեռացել,—նոյն գիշերը այստեղ գետնի վրա տարածված էր մի բազմութիւն, մի ուժաթափ և ուշակորոյս բազմութիւն, որ սարսափելի տագնապի մէջ ներկայացնում էր կատաղութեան բոլոր զարհուրանքը։

—Մի կաթիլ ջուր.... նուաղեցայ ծարաւից.... լսվում էին զանազան դառն հառաչանքներ։

—Մի պատառ հաց....մեռնում եմ սովից....աղաղակում էին զանազան խուլ ձայներ։

Այդ ողորմելիները մի ամբողջ շաբաթ համարեա ոչինչ չէին կերել, ոչինչ չէին խմել։ Պաշարումը այն աստիճան չուտափոթ և անակնկալ կերպով կատարվեցաւ, որ բերդի մէջ բաւական պաշար վեր առնելու ժամանակ չը դտան։ Այժմ պաշարուածները ստիպված էին պատերազմել երեք հզոր ոսոխների դէմ. ներսից՝—սովի և ծարաւի դէմ, իսկ դրսից՝—թշնամու կրակի դէմ։

Ամսի 8-ից զինուորները զրկվեցան տաք կերակրից։ Բերդապահի ձին և արտիլերիայի ձիաները բոլորը մորթել և կերել էին։ Ձիաների գարին մնաց զինուորների համար, որը նոյնպէս սպառվեցաւ։ Վերջապէս ուտեստը այն աստիճան նուազեցաւ, որ իւրաքանչիւր զինուորին տալիս էին օրական 1/8 ֆունտ կամ 4 լոտ պաքսիմաթ և մի—մի դրգալ ջուր։ Իսկ յունիսի տօթը այդ ժամանակ անտանելի էր։ Հիւանդանոցում հիւանդների վիճակը, ուտելու և խմելու կողմից, շատ չէր զանազանվում առողջներից։

Բերդի մէջ ջուր չը կար։ Բերդից դուրս, 300 քայլ հեռաւորութեան վրա, գտնվում էր մի աղբիւր, որը փակել էին թուրքերը։ Ամեն գիշեր փորձում էին ցած իջնել բերդից ջուր բերելու համար, բայց 20—30 գնացողներից շատ անգամ մէկն էլ չէր վերադառնում։

—Հաց....ջուր....կրկին լսելի եղան օրհասական հառաչանքները։

Ահա կրկին և կրկին որոտաց թնդանօթի բոմբիւնը և խլացրեց թշուառականների ձայները....

Այդ այն բոպէներից մէկն էր, որ մարդը կորցնում է իր կարեկցութիւնը դէպի ընկերը,—կորցնում է, որովհետև ոչինչով օգնելու հնար չունի։ Այդ պատճառով, ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում սովեալների վրա, ոչ ոք հոգ չէր տանում ծարաւիներին։ Ամեն մարդ, ընդհանուր խռովութեան մէջ, սպասում էր մի վճռական բոպէի, երբ թշնամին հեղեղի նման ներս կը թափվէր, և սուրը ձեռքում կը հանդիպէին իրանց պատուաւոր վախճանին։

Միջնաբերդի ներսից, պատապարված վերնապարսպի հետևում, շուրջանակի շարված էին պահապան զինուորներ, և հրացանների համար բացված ծակերից դիտում էին թշնամու շարժումը։ Նրանք չէին համարձակվում գլուխները վեր բարձրացնել պարսպից։ Բերդի չորս կողմի բարձրաւանդակներից անխնայ նետում էին, և գնդակները շվշվալով սլանում էին աջ ու ձախ, զարկելով պահապանների երեսին մի անախորժ տաք օդ։

Այստեղից տեսնվում էր քաղաքը, որ ներկայացնում էր մի սոսկալի տեսարան։ Նա լուսաւորված էր, կարծես, մի մեծ տօնախմբութեան համար։ Լուսաւորված էին և քաղաքի շրջակայ բարձրութիւնները։ Կատարվում էր մարդկային անգթութեան եղեռնական տօնը։ Դա գազանների մի տօն էր, որ հանդիսացնում էին մուսուլմանները։ Ցարտարոսը, միայն տարտարոսը, իր կրակի բոցերով, իր չար ոգիներով և իր բոլոր զարհուրանքով կարող էր պարծենալ մի այսպիսի անգթութեան առիթ։ Այրվում էին հայերի տները։ Իւրաքանչիւր տան լուսամուտներից և դռներից հոսում էին, կարծես, հրեղէն գետեր, և խառն ծխային թանձրութեան հետ, բարձրանում էին օդի մէջ, սփռելով դէպի ամեն կողմ կայծերի յորդ և առատ

## ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

«Խենթը մի քար գլորեց փոսը,
հարիւր խելքներ հաւաքվեցան,
չը կարողացան դուրս հանել։»

«Մինչև խելացին կը մտածէ,
խենթը դեռից անց կը կենայ։»

«Խենթից—ուղիղ պատասխան։»
Ազգ. առածներ։

Ա.

Բայազէդը պաշարված էր։

Թուրք, քիւրդ, բօշայ, ջուլօ և աւելի քան քանի հազար խառնիճաղանճ բաշիբոզուկներ, խառն տաճկաց կանոնաւոր զորքերի հետ, շրջապատել էին կիսաւեր քաղաքը։ Նա ծխում էր կրակի մէջ, որպէս մի ընդարձակ խարոյկի տարածութիւն։ Քրիստոնեայ հայերի տները դատարկվել էին բնակիչներից։ Բարբարոսի սուրը և գերութիւնը սպառել էր նրանց։ Հայերից մի փոքրիկ մաս միայն աղատվել էր, կանխապէս փախչելով սահմանակից Մագու քաղաքի կողմերը, որ պարսից հողի վրա է գտնվում։

Բայազէդի միջնաբերդը դեռ մնացել էր անառիկ։ Փոքրաթիւ ռուս զինուորներ, հայ և թուրք կամաւոր միլիցիայի հետ, ամրացել էին այնտեղ, և օրհասական յուսահատութեամբ, սպասում էին